

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Վեմ» ակումբի տասնհինգերորդ հավաքի

Ամսաթիվ 30 հունիսի, 2016 թ.

Անցկացման վայր Երևան, Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան

Ներկա էին՝

«Վեմ» ակումբի անդամներից 10-ը՝ Մեսրոպ քին. Արամյանը, Արմեն Մարգարյանը, Արա Մկրտչյանը, Շահեն Ծառուկյանը, Արամ Փախչանյանը, Սվետլանա Հակոբյանը, Սարգիս Ղազարյանը, Սարգիս Բադալյանը, Արամ Արամյանը, Աշոտ Ասլանյանը, ինչպես նաև «Վեմ» ռադիոկայանի տնօրեն Կարեն Հալաջյանը:

Օրակարգ

1. Շրջայց Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանում:
2. Աշխատանքային քննարկում թանգարանի համերգային դահլիճում.
 - ա) Տ. Մեսրոպ քին. Արամյանի խոսքը,
 - բ) իրականացված աշխատանքների հաշվետվություն:
3. Ամփոփում:

1. «Վեմ» ակումբի 15-րդ հավաքի մշակութային մասը սկսվեց շրջայցով: Ալեքսանդր Սպենդիարյանն այս տանն ապրել է կյանքի վերջին երկու տարում՝ 1926-28 թթ.: Իր մահից 35 տարի անց կոմպոզիտորի դուստրերի խնդրագրից հետո Անտոն Քոչինյանի որոշմամբ հիմնադրվում է տուն-թանգարանը, որի առաջին տնօրենն էր կոմպոզիտոր Վլադիլեն Բայանը:

Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանով շրջայցը վարեց արվեստաբան, թանգարանի ավագ գիտաշխատող Արմինե Պետրոսյանը: Առաջինը «Կյանքի ուղին» սրահն էր, որտեղ ներկայացվեցին ծննդավայրում՝ Ղրիմում, Սպենդիարյանի անցկացրած տարիները: Սպենդիարյանի նախնիներն Անիից էին: Հայրը՝ Աֆանասի Սպենդիարովը (Ստեփանոս Սպենդիարյանց), խոշոր գործարար էր և զբաղվում էր փայտանյութի առևտրով: Մայրը՝ Նատալյա Սելինովան, հայտնի Սելինյանների ընտանիքից էր: «Կյանքի ուղին» սրահում են ներկայացված Ալեքսանդր Սպենդիարյանի անձնական իրերը, ջութակը, հայաստանյան անձնագիրը և այլն:

Հաջորդ սրահը՝ «Հուշասենյակը», կոմպոզիտորի աշխատասենյակն է և վերստեղծվել է լուսանկարի ու Ալեքսանդր Սպենդիարյանի դստեր՝ Մարինա Սպենդիարովայի հիշողությունների հիման վրա: Կոմպոզիտորի ներշնչանքի այս սենյակում հյուրերին սպասվում էր առաջին անակնկալը: Կենդանի կատարմամբ հնչեց կոմպոզիտորի «Այ վարդ» ռոմանսը, որը կատարեց Երևանյան կոնսերվատորիայի մագիստրոս, 2014 թվականին «Երգեցողություն» անվանակարգում բարձր կատարողական արվեստի համար նախագահական մրցանակի արժանացած Անդրանիկ Մալխասյանը, նվագակցում էր կոնսերվատորիայի դոցենտ, բազմավաստակ դաշնակահար, մանկավարժ Մարգարիտ Սարգսյանը: Այս երաժիշտների ևս մի քանի կատարումներ հյուրերը վայելեցին համերգային դահլիճում՝ աշխատանքային քննարկման ավարտին:

Առաջին կատարումից հետո «Վեմ» ակումբի անդամները հերթական անգամ ունկնդրեցին Ալ. Սպենդիարյանի երաժշտությունը «Ստեղծագործական ուղին» սրահում: Այստեղ հյուրերը լսեցին հատված «Երևանյան էսքիզներ» ստեղծագործությունից, որը հատուկ գրվել է Սպենդիարյանի հիմնած հայաստանյան առաջին սիմֆոնիկ նվագախմբի համար: Ներկայացվեց եզակի ցուցանմուշներից մեկը՝ «սպենդիարոֆոն» երաժշտական գործիքը, որը պատրաստվել է կոմպոզիտորի պատվերով՝ կաշվե գոտուց և 12 բրոնզե զանգակներից՝ «Երեք արմավենի» ստեղծագործության համար: Շրջայցի ավարտին «Վեմ» ակումբի անդամները մասնակցեցին «Վիրտուալ դիրիժոր» փոխներգործուն (ինտերակտիվ) խաղին, որը հնարավորություն է տալիս այցելուին փորձելու իր դիրիժորական ունակությունները՝ դառնալով նվագախմբի դիրիժոր:

Շրջայցն ամփոփեց և հյուրերին համերգասրահում դիմավորեց Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն, կոմպոզիտոր Մարինե Օթարյանը, ով արդեն քսան տարի է

անօրինակ խանդավառությամբ ու նվիրումով ապրեցնում է Հայաստանում առաջին երաժշտական հուշային թանգարանի և Ալեքսանդր Սպենդիարյանի անունն ու գործը:

Աշխատանքային քննարկումը տեղի ունեցավ դահլիճում, որտեղ սովորաբար իրականացվում են ժամանակավոր ցուցադրություններ, կրթական ծրագրեր, համերգներ, դասախոսություններ, սեմինարներ ու կինոդիտումներ:

ա) Տ. Մեսրոպ քահանա Արամյանը, շնորհակալություն հայտնելով Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանին, նշեց, որ «Վեմ» ռադիոկայանը միշտ, ինչով կարող է, կաջակցի, կկանգնի այս մշակութային օջախի կողքին: «Վեմը» մեր մշակութային կյանքի, մեր անկախության շրջանի կարևորագույն ձեռքբերումներից մեկն է: Ամեն երկիր ունի իր դասական երաժշտության ալիքը: Մենք հպարտանում ենք «Վեմի» գոյության համար. նրա ձայնադարանը շատ ավելի հետաքրքիր է, քանի որ հատկապես մեծ ուշադրություն ենք դարձնում հոգևոր, ազգային երաժշտությանը»,- ասաց Տ. Մեսրոպ քահանա Արամյանը:

«Վեմ» ակումբի անդամ Սարգիս Բադալյանն ավելացրեց, որ «շատ շնորհակալ ենք, նաև՝ շատ հպարտ, ուրախ, որ կա այս տուն-թանգարանը, որ մենք գալիս ենք, որ ունենք այսպիսի հաճույք ապրելու հնարավորություն»:

բ) Կարեն Հալաջյանը տեղեկացրեց, որ երկար ժամանակ չհանդիպելուց հետո մի շարք փոփոխություններ են տեղի ունեցել:

- 2015 թվականի հունիսից «Վեմ» ռադիոկայանն ունի նաև համացանցային հեռարձակում, այսինքն՝ ամբողջ աշխարհով հնչելու հնարավորություն ունի:
- Ռադիոկայանի պաշտոնական կայքն արդիականացման փուլում է: Մշակվել է նոր տարբերակը, ներկայացվելու է նոր որակի կայք: Հաստատվել է դիզայնի վերջնական տարբերակը: Մատչելիության համար, նաև հաղորդումների որոնումը հեշտացնելու համար որոշվել է հրաժարվել դասական ուղղագրությունից:
- Մեր երկրում առաջին անգամ «Վեմ» ռադիոկայանը ձևավորել է դասական երաժշտության հեղինակային ծրագրավարների խումբ: Նրանց ամենօրյա ուղիղ եթերային աշխատանքն ընդգրկում է ժամը 9:00-ից մինչև 18:00-ն:
- Ռադիոկայանի ժամատախտակում ավելացել են հեղինակային նոր հաղորդաշարեր, որոնք ներկայացնում ենք ստորև:

«Գրական ընտրանի» շարքի հեղինակ, բանասիրական գիտությունների թեկնածու Անի Փաշայանը ներկայացնում է քսաներորդ դարի գրականության

ամենացայտուն ստեղծագործություններն ու դրանց հեղինակներին: Անցած թողարկումների հերոսներն են եղել Հերման Հեսսեն, Ջեյմս Ջոյսը, Ֆեդերիկո Գարսիա Լորկան, Ուիլյամ Ֆոլքները, Թոմաս Էլիոթը, Դեյվիդ Հերբերտ Լուրենսը, Ալբեր Բամյուն:

«Նոր գրքեր» հաղորդաշարի ընթացքում Հասմիկ Գուլակյանը ծանոթացնում է նոր հրատարակումներին, որոնք լույս են տեսել Հայաստանում, Արցախում և սփյուռքում:

«Մեր կինոն» շարքը պատրաստում և ներկայացնում է Սարգիս Նաջարյանը: Սա հայ կինոյի պատմության լիակատար ընթացք է, որում արտացոլվում են ամենացայտուն գեղարվեստական ֆիլմերը, ռեժիսորները, արվեստի մյուս տեսակների հետ համադրումները, նաև վավերագրական կինոյի տարեգրությունը: Ռադիոակնարկների շարքի յուրաքանչյուր թողարկում ստանում է համապատասխան երաժշտական ձևավորում:

«Երաժշտական թատրոնի գոհարներ» շարքի ընթացքում առաջին անգամ հայաստանյան ռադիոթերթում հեռարձակվում է դասական օպերայի կամ բալետի ամբողջական տարբերակը: Յուրաքանչյուր գործողությունից առաջ ընթերցվում է լիբրետոյի համապատասխան հատվածը՝ ունկնդրումը դարձնելով ավելի պատկերավոր և ըմբռնելի: Շարքի հեղինակը Ինեսսա Խաչատրյանն է:

3. Հերթական հավաքը նախատեսվում է կազմակերպել սեպտեմբեր ամսվա երկրորդ կեսին:

Նախագահող՝ Մեսրոպ քին. Արամյան

Քարտուղար՝ Օլյա Նուրիջանյան

ПРОТОКОЛ

15-го собрания клуба «Вэм»

Дата: 30 июня, 2016 г.

Место: Ереван, дом-музей Александра Спендиаряна

Участвовали:

10 членов клуба «Вэм»: о. Месроп Арамян, Армен Маргарян, Ара Мкртчян, Шаген Царукян, Арам Пахчанян, Светлана Акопян, Саргис Казарян, Саргис Бадалян, Арам Арамян, Ашот Асланян, а также директор радиостанции «Вэм» Карен Аладжян.

Порядок дня:

Тур в доме-музее Александра Спендиаряна.

Рабочее обсуждение в концертном зале музея:

- 1) слово О. Месропа Арамяна,
- 2) отчет о выполненных работах.

Завершительная часть.

1. Культурная часть 15-го собрания клуба «Вэм» началась с тура по музею. Александр Спендиарян жил в этом доме последние два года своей жизни — в 1926-28 гг. Через 35 лет после его смерти, по прошению дочерей композитора и по решению Антона Кочиняна, был основан дом-музей, первый директор которого был композитор Владилен Балян.

Проводила тур искусствовед, старший научный сотрудник музея Арминэ Петросян. Первым был зал «Путь жизни», где были представлены годы жизни

Спендиаряна в Крыму, где композитор родился. Его предки были из города Ани. Отец, Афанасий Спендиаров (Степанос Спендиарянц), был крупным дельцом и занимался торговлей древесиной. Мать, Наталья Селинова, была из знаменитой семьи Селинянов. В зале «Путь жизни» представлены личные вещи композитора, его скрипка, армянский паспорт и т.д.

Следующий зал — «Памятная комната» — это рабочая комната композитора и была воссоздана на основе воспоминаний фотографа и дочери Спендиаряна Марины Спендиаровой. Первый сюрприз ждал гостей в этой комнате. Живым исполнением прозвучал романс композитора «Ай вард». Его исполнил магистр Ереванской консерватории Андраник Малхасян, который в 2014 году удостоился президентского приза в номинации «Пение» за высокое исполнительское искусство, а аккомпанировала доцент консерватории, пианист, педагог Маргарит Саргсян. Еще несколькими исполнениями этих музыкантов гости насладились в завершение рабочего обсуждения в концертном зале.

После первого исполнения члены клуба в очередной раз послушали музыку Спендиаряна в зале «Творческий путь». Здесь гости послушали отрывок из произведения «Ереванские эскизы», которое было специально написано для первого армянского симфонического оркестра, созданного Спендиаряном. Был представлен уникальный экспонат — музыкальный инструмент «спендиарофон», изготовленный по заказу композитора из кожаного пояса и 12 бронзовых колокольчиков для произведения «Три пальмы». В завершение тура члены клуба «Вэм» приняли участие в интерактивной игре «Виртуальный дирижёр», который дает возможность посетителю попробовать свои дирижёрские способности, став дирижёром оркестра.

Тур был завершён, и в концертном зале гостей встретил директор дома-музея, композитор Маринэ Отарян, которая уже 20 лет с небывалым энтузиазмом и преданностью поддерживает имя и дело Александра Спендиаряна и первого в Армении музыкального памятного музея.

Рабочее обсуждение состоялось в зале, где обычно проводятся временные выставки, образовательные программы, концерты, лекции, семинары и просмотры кинофильмов.

1) О. Месроп Арамян, поблагодарив дом-музей Александра Спендиаряна, отметил, что радиостанция «Вэм» всегда будет поддерживать, чем сможет, этот культурный очаг. «Вэм» — одно из важных достижений нашей культурной жизни и

нашей независимости. Каждая страна имеет свой радиоканал для классической музыки. Мы гордимся существованием радиостанции «Вэм». Ее собрание музыкальных записей намного интереснее, поскольку мы уделяем большое внимание особенно духовной и национальной музыке»,— сказал о. Месроп.

Член клуба «Вэм» Саргис Бадалян добавил: «Мы очень благодарны, а также горды и рады, что существует этот дом-музей, и что мы приходим сюда и имеем возможность получать такое наслаждение».

2) Карен Аладжян проинформировал о том, что в течение того долгого времени, когда клуб не собирался, произошёл ряд изменений.

Начиная с июня 2015 года радиостанция «Вэм» имеет также интернет трансляцию, то есть, возможность звучать по всему миру.

Официальный сайт радиостанции находится в фазе модернизации. Разработана новая версия, и будет представлен сайт нового качества. Утверждён окончательный вариант дизайна. Для легкодоступности, а также облегчения поиска радиопередач, было решено отказаться от традиционной армянской орфографии.

В нашей стране впервые радиостанция «Вэм» сформировала группу авторов-ведущих программ по классической музыке. Их работа в прямом эфире каждый день начинается с 9 утра и продолжается до 6 вечера.

Радиостанция создала новые радиoproграммы, которые представлены ниже.

Автор программы «Литературное избранное», кандидат филологических наук Ани Пашаян представляет самые яркие произведения 20-го века и их авторов. Героями предыдущих передач стали Герман Гессе, Джеймс Джойс, Федерико Гарсиа Лорка, Уиллиам Фолкнер, Томас Элиот, Дэвид Герберт Лоуренс и Альбер Камю.

В ходе программы «Новые книги» Асмик Гулакян знакомит с новыми изданиями, вышедшими в свет в Армении, Арцахе и диаспоре.

Программу «Наше кино» готовит и представляет Саргис Наджарян. Это полный цикл об истории армянской кинематографии и представляет самые яркие художественные кинофильмы, режиссёров, сопоставления с другими ветвями искусства, а также летопись документального кино. Каждая передача имеет соответствующее теме музыкальное оформление.

В ходе программы «Жемчужины музыкального театра» впервые в армянском радиоэфире транслируются полные версии классических опер и балетов. Перед каждым актом читается соответствующая часть либретто, что делает прослушивание более образным и понятным. Автор цикла — Инесса Хачатрян.

3. Очередное собрание планируется проводить во второй половине сентября.

Председатель, О. Месроп Арамян

Секретарь, Оля Нуриджанян